

ներշնչումներու, գլխաւորաբար արտադրութիւն են այդ տեղի (Հայաստանի եւ Փոքր Ասիոյ) բնաշխարհիկ գեղարուեստի մը»⁽¹⁾ :

Եթէ ցարդ որոշ փաստեր կը պակսին խաւաւոր գորգերու սկզբնաւորութիւնը Հայաստանէն նկատելու, անդին ունինք բազմաթիւ տրււելներ, որոնք խաւաւոր գորգին հնագոյն պատմութեան մէջ խիստ Հայկական մասնակցութեան խոշոր եւ աներկրայելի բաժին մը կ'ապահովեն :

Տանք այդ տուեալներէն քանի մը հատ :

Հայկական մատենագրութիւնն է որ կապերտի կամ գորգի մասին հնագոյն վկայութիւնները պահած է : Հայկական մատենագրութիւնը մեզի կը ներկայացնէ գորգի բազմատեսակ գործածութեան իբր հնագոյն վայր նոյնինչն Հայաստանը : Հայաստան կը յիշուի առաջին անգամ գորգը իբր բնահարկ տուող : Հնագոյն օտար գորգերուն մէջ կան որոշ գծածուներ զուտ Հայկական ազդեցութեան, մինչ հնագոյն Հայկական գորգերուն մէջ կը պակսին եկամուտ օտար ազդեցութիւններ գծածուներու : Հայկական գորգերուն մէջ, նաեւ Հայ ազդեցութեան ենթարկուած գորգագծագրութեանց մէջ, որոշ կը մնան Հայ նախաքրիստոնէական արուեստի եւ աւանդութեանց ազդեցութիւնները, ինչպէս վիշապապաշտութեան, ջրապաշտութեան, մայրապաշտութեան, սեռապաշտութեան անջնջելի հետքեր, որոնք ինչպէս գորգերու՝ նոյնպէս նաեւ ուրիշ Հայ արուեստներու գծածուներուն մէջ անխափան կ'երեւան, թէեւ շատ բան կորսնցուցած իրենց բնատիպերէն :

Պէտք չէ մոռնալ նաեւ որ Հայաստան Պարսկաստանի կամ Արաբական աշխարհի պէս իր գորգի պահանջները չէր կրնար արտադրուող գոհացնել, հարուստ կամ տիրապետող չըլլալով : Ուրեմն Հայոց համար միակ միջոցը գորգի տիրանալու եւ իրենց պէտքերը գոհացնելու՝ իրենց խիստ կոզմէն գորգ արտադրելն էր :

Հայերը շատ վաղուց գորգ կը գործածէին : Փաւստոս Բիւզանդ կը պատմէ որ Գրիգոր Լուսաւորիչի երկու թոռները, Պապ եւ Աթանաղինէս, խենէշ կեանք մը կ'ապրէին եւ ատոր համար ալ յանկարծակի մահուամբ կը պատժուին : Ըստ Փաւստոսի՝ անոնք Տարօնի Աշտիշատ աւանին իրենց պապուն՝ Գրիգոր Լուսաւորիչի շինած եկեղեցիին հպիսկոպոսանոցին մէջ շուայտ խրախճանքի յանձնուած էին : «Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս հպիսկոպոսանոցին ուտէին եւ ըմպէին, յանկարծակի հրեշտակ տեսան երեւցաւ ի նմանութիւն փայլատական, եւ հարեալ սատակէր գերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ : Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք եւ բազմականակիցք

(1) Oriental Rugs. — Walter A. Hawley, 1927, New York, p. 94.